

Արձանագրություն № 4 (304)
ԵՊՀ-ի ռուս քանասիրության ֆակուլտետի գիտական խորհրդի
2018 թ-ի հունվարի 31-ի նիստի

Գիտխորհրդի նիստը նախագահում էր ֆակուլտետի դեկան դոցենտ Պ.Բալայանը:
Ֆակուլտետի գիտխորհրդի նիստին ներկա են 27 անդամներից 20-ը: Ապահովված է անհրաժեշտ քվորումը:

Օրակարգ.

1. 2017-2018 ուս.տարվա ձմեռային քննաշրջանի արդյունքների մասին:
2. ԵՊՀ-ի անվանական կրթաթոշակների հարցը:
3. Հրատարակման երաշխավորելու մասին:
4. Ընթացիկ հարցեր:

1. ԼՍԵՑԻՆ` 2017-2018 ուս.տարվա ձմեռային քննաշրջանի արդյունքների մասին:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ` Ֆակուլտետի դեկանի տեղակալ Դ. Գազարովան:

Ավարտվել է ձմեռային քննաշրջանը, արջևում լուծարքային շրջանն է: Ռուսաց լեզու և գրականություն բաժնի 3-րդ կուրսի, ՄՄՀ բաժնի 4-րդ կուրսի և մագիստրատուրայի 1-ին ուսանողները ավարտել են քննաշրջանը առանց պարտքերի: Մագիստրատուրայում ունենք 1 անբավարար գնահանական 2-րդ կուրսում: Մտահոգիչ է իրավիճակը 1-ին կուրսում. Սոտ 2/3 ունի անբավարար գնահատականներ, հիմնականում ռուսաց լեզվի պրակտիկում, արտասահմանյան գրականություն, լեզվի պատմություն առարկաներից: Փոփոխվել է լուծարքը հանձնելու ընթացակարգը. ամեն անգամ կայացվելու է նոր որոշում և պարտադիր հանձնաժողովի ներկայությամբ:

2. ԼՍԵՑԻՆ` 2017-2018 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի համար անվանական կրթաթոշակների թեկնածուների երաշխավորության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ` Դեկան Պ. Բալայանը, պրոֆ. Լ. Մաթևոսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ` Հաշվի առնելով ուսումնառության ընթացքում ցուցաբերած գերազանց առաջադիմությունը` որպես անվանական կրթաթոշակի թեկնածուներ` վերահաստատել հետևյալ անձանց.

Օվեյան Իրնա (3-րդ կուրս, /ռուսաց լեզու և գրականություն/) ` **Վ.Քոչարյանի անվան կրթաթոշակ.**

Ավետիսյան Ալիսա (բակալավրիատի 4-րդ կուրս ` /լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցում` ռուսաց լեզու/) ` **Վ.Բրյուսովի անվան կրթաթոշակ:**

3. ԼՍԵՑԻՆ` Հրատարակման երաշխավորելու մասին:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ Մեթոդական խորհրդի նախագահ պրոֆ. Վ. Հարությունյանը ներկայացրեց ռուսաց լեզվի ամբիոնի /հումանիտար ֆակուլտետների/ դասախոսներ Լ.Ս. Հարությունյանի, Թ.Ա. Առուշանովայի, Ա.Վ. Գասպարյանի “**Ռուսաց լեզվի ձեռնարկ (ընթերցանության գիրք)**” ձեռնարկը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ռուսաց լեզվի ամբիոնի /հումանիտար ֆակուլտետների/ դասախոսներ Լ.Ս. Հարությունյանի, Թ.Ա. Առուշանովայի, Ա.Վ. Գասպարյանի “**Ռուսաց լեզվի ձեռնարկ (ընթերցանության գիրք)**” ձեռնարկը երաշխավորել հրատարակման:

4. ԼՍԵՑԻՆ՝ Ընթացիկ հարցեր:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ ֆակուլտետի դեկանի տեղակալ Դ. Գազարովան:

Մանկավարժական պրակտիկան անց է կացվում 06.02.2018-ից մինչև 17.03.2018 առկա ուսուցման ուսանողների համար, և 12.02.20178-ից մինչև 23.03.2018՝ հեռակա ուսանողների համար: Պրակտիկան անցնում է ք.Երևանի 3 դպրոցներում, հեռավոր շրջանների ուսանողների համար՝ ըստ բնակության վայրի: Փետրվարի 6-ին ժամը 14.30 կայանալու է մանկավարժական պրակտիկային վերաբերող կոնֆերանս:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հայտարարությունն ընդունել ի գիտություն:

5. ԼՍԵՑԻՆ՝ Ընթացիկ հարցեր:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ Պ.Բալայանը: Իր դիմումի համաձայն ֆակուլտետի գիտական խորհրդի կազմից դուրս է եկել Ն. Օրմանյանը, նրա փոխարեն խորհրդի կազմում ընդգրկվել է նույն ամբիոնի դասախոս Լարիսա Փարամազյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հայտարարությունն ընդունել ի գիտություն:

Գիտական խորհրդի նախագահ՝

Պ.Բ. ԲԱԼԱՅԱՆ

Գիտական խորհրդի քարտուղար՝

Մ.Ռ. ԴՊԻՐՅԱՆ